

Բ Ա Ն Ա Ս Է Բ

ԱՄՍԱԹԵՐԹ

Գ Ր Ա Կ Ա Ն Է Ի Գ Ք Տ Ա Կ Ա Ն

Զ ՏՄԲԻ 1904	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռուբ. = 3 դոլար :	ՍԵՊՏ. - ՀՈԿՏ. ԹԻԻ 9-10
----------------	--	---------------------------

ՊԱՐԻՍԻ ՄԷՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԸ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ահա նոր դործ մը , նոր ձեռնարկ մը , որուն վրայ շատոնց եւ շատ անգամներ խորհած էի թէ եւ , բայց այսօր միայն կարող կըլլամ այդ մտածումս իրականացնել , գործադրութիւնն սկսելով իմ բնակարանէս :

Ներոպայի մէջ հայկական թանգարանի մը հաստատումը շատ մեծ օգուտներ կրնայ տալ . օրինակի համար՝ եւրոպացիին ճանչնալու միջոցը կուներնայ հայ ցեղին դրական ու գեղարուեստական արտադրութիւնները , հայ ազգին վերաբերեալ զանազան տեղեկութիւններ ստանալու համար կը դիմէ թանգարանի վարչութեան . իսկ հայ այցելուն իր մտաւոր պաշարը կը զօրացնէ հոն , օգտուելով իր արամադրութեան տակ դրուած գրքերէն , կը կարգայ աշխարհիս ամէն կողմէն ստացուող հայ թերթերը , կը կապէ ինքզինքը հայութեան հետ :

Իբրեք՝ Պարիսի մէջ ասկէ առաջ գոյութիւն ունեցած է հայ ընթերցարանի կամ մատենադարանի նման բան մը , սակայն դժբախտաբար կարճատեւ եղած է անոր կեանքը :

Թանգարանիս մէջ դանդաղ իրերն իմ անձնական սեպհականու-թիւնս ըլլալուն՝ թանգարանն ալ կանգուն կը մնայ , որքան ժամանակ որ արտակարգ պատճառ մը վերջ չդնէ անոր :

Թանգարանս յայտ է ամէն ազգէ եւ ամէն դասակարգէ այցելուի առջեւ , իՇ եւ ՆՇ օրերը , առաւօտեան ժամը 9-12 , իսկ կէսօրէ վերջը ժամը 2-4 :

ՄՈՒՏՔԸ բացարձակապէս ՁԲԻ է :

Թանգարանիս մէջ կը դառնուին ազգային հնուածիւններ (գրամներ , իրեր , եւն.) , ազգային հին վաճառու եւ այլ շինութիւններու տեսարաններ , հայ լեզուի , պատմութեան ու շարժումներու վերաբերեալ հայերէն ու եւրոպական լեզուներով հրատարակուած գրքեր , ազգային շատ մը թերթերու հաւաքածուներ , կտաւներ , Պոլիս , Թիֆլիս , Եւրոպա եւ Ամերիկա հրատարակուող հայերէն օրաթերթեր ու հանդէսներ :

Թանգարանիս հասցէն է « Բանասէր » խմբագրատունը , — 112, Bd. Rochechouart. Paris.

Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

1. — Որպէս զի Թանգարանս այցելողներն իրարու ընթերցումին արգելք չըլլան , կը խնդրուի որ խօսակցութեամբ ժամանակ չանցնեն , Թանգարանս միմիայն ուսումնասիրութեան համար բացուած է եւ ժողովրդի տրամադրութեան տակ գրուած :

2. — Կը խնդրուի չծխել :

3. — Այցելութեան համար որոշուած ժամերէն դուրս մարդ չընդունուիր :

4. — Գրքերու եւ թերթերու գործածութեան ժամանակ ուշադրութիւն ընել , որպէս զի չաղտոտին եւ չպատռոտին :

5. — Փոխ գիրք եւ թերթ դուրս չի հանուիր , ո՛վ որ ալ լինի խնդրողը :

6. — Իմ աշխատութեան սեղանիս վրայ դրուած գրքերու , թերթերու եւ թղթերու ձեռք չառլ :

Հիմնադիր

Պարիսի Հայկական Թանգարանին

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

